## ԽՈՒՃԱՊԻ ՎԱՆՔ

Մալականաբնակ Պրիվոլնոյե գյուղից 25 կմ հյուսիս, Լալվարի հյուսիսարևմտյան փեշին, Խորակերտի վանքից ոչ հեռու. Վրաստանի Մառնեուլի շրջանի հայկական Ախքորփի գյուղից 2 կմ հարավ-արևմուտք, ընդարձակ բացատում ժամանակների արհավիրքին դիմակայում է Խուճապի վանական խոշոր հաստատությունը: Սրբատաշ քարով շարված, արտաքին ճոխ հարդարանքով գմբեթակիր գլխավոր եկեղեցին, միանավ սրահը, շրջապարիսպն ու այլ շինություններ ներկայումս կիսավեր են:

Մենաստանը երկար ժամանակ եղել է հյուսիսային Հայաստանի հայ քաղկեդոնիկների խոշոր կենտրոններից, թերևս երկրորդը՝ Ախթալայից հետո: Այստեղ, այս խաղաղ պայմաններում կուսանոց էր մինչև 1970-ական թվականները, հուշարձանների որմերին վիմագրեր չեն նկատվել:

***1184. ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** հարթ, ձեռքերը կրծքին խաչած ննջեցյալի հարթաքանդակի գլխավերևում, 5 տող.

ԱՅՍ է ՏԱՊԱՆ Ա
ԻԱՆԻ ՈՐԴԻ ԱՐ
ՈՒԹԻՆ, ՈՐ ՓԼՈՅԽԵՑԱՒ
ԱՌ ԱՀ ԹՎԻՆ
ՌՃՀԶ (1727):

***Ծանոթ.*** Տապանաքարն ընկած է Խուճապի վանքի գլխավոր եկեղեցու մեջ, բերված է այլ տեղից:

## ՄԵԾԱՎԱՆ

Աշոցքի ամենամեծ գյուղն է: Ըստ Ե. Լալայանի՝ XIX դ. սկզբից եղել է Մելիք Շահնազարի ամառանոցը և վերաբնակեցվելով՝ կրել է նրա անունը: Բնակավայրի հարավարևելյան մասում պահպանվում են V-VI դդ. վանքի ավերակներ (երկու եկեղեցի, գերեզմանոց, պարսպի մնացորդներ): Պ. Մուրադյանը կարծում է, որ գյուղն սկզբնապես պետք է որ կոչված լինի Խոշավանք:[111]

Մեծավան-Խոշավանում եկեղեցի է կառուցվել Կյուրիկյան Աբաս թագավորի օրոք՝ 1095 թ., ինչպես և Թամար թագուհու որդի Գեորգի-Լաշայի թագավորության տարիներին՝ 1220-30-ական թվականներին, որոնց մասին տեղեկացնում են տեղի վրացերեն արձանագրությունները:[112]

Մեծավանը նշանակալի դեր է խաղացել Աշոցք գավառի վարչական, հոգևոր և պաշտպանական կյանքում:

XIX դ. և վերջին տարիների ընթացքում գյուղի երկու եկեղեցիները նորոգվել են կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդների կողմից:

---

[111] *Պ. Մուրադյան,* ՀՎԱ, էջ 151:
[112] Նույն տեղում, էջ 153-160: